Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

N Ն/04.8/11170
12.12.2023 թ.

Գործուղման մասին
*ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

- **Գործուղված անձ**

Իրավաբանական վարչության պետի տեղակալ Արմինե Հովհաննիսյան
Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Սառա Անտոնյան
Մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Քրիստինա Հակոբյան

- **Երկիր/Քաղաք/Ժամկետ**

Չեխիայի Հանրապետություն, քաղաք Բռնո, 2023թ. դեկտեմբերի 5-6:

- **Հրավիրող կողմ**

Չեխիայի Հանրապետության Թունավոր միացությունների ազգային կենտրոնի և «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի տարածաշրջանային կենտրոն:

- **Նպատակը**

Մասնակցություն՝ «Նոր կայուն օրգանական աղտոտիչների գույքագրում» Մաս II. Ֆտոր պարունակող ԿՕԱ-ների ու այլ արդյունաբերական ԿՕԱ-ների և Իրականացման ազգային ծրագրի (NIP) նոր ձևաչափ» թեմայով դասընթացին:

- **Քննարկված թեմաները**
    - 05.12.2023թ. «Continental» հյուրանոց

Քննարկվեցին՝

- SC-ի ստանձնած պարտավորությունները՝ կապված նոր ԿՕԱ-ների կառավարման և հատուկ բացառությունների հնարավորությունների հետ: ֆտորացված ԿՕԱ-ներ (մաս I)՝ (ՊՖՕԱ) PFAS (պերֆտորոկտանսուլֆոնաթթու), (ՊՖՕԱ) PFOA, (պերֆտորոկտանաթթու), (ՊՖՀԱ) PFHxS (պերֆտորհեքսանսուլֆոնաթթու), ներառյալ հատկությունները և կիրառման հիմնական ձևերը,

- PFAS-ի կառավարումը ջրային միջավայրում և ընթացիկ մոնիթորինգի գործողությունները,
- FIRE-էքսպո հետազոտություն,
- PFAS -ը սննդի մեջ՝ հետազոտական աշխատանք,
- SC-ի ներքո ստանձնած պարտավորությունները՝ կապված նոր ԿՕԱ-ների կառավարման և հատուկ բացառությունների հնարավորությունների, այլ արդյունաբերական ԿՕԱ-ների (մաս II) հետ,
- ԿՕԱ-ների նոր գույքագրումներ. հղում վերանայված NIP-ի կառուցվածքին և տեղեկատվության այն շրջանակը/տեսակները, որոնք արտացոլվելու են NIP-ի գլուխներում, ինչպես նաև հղում ազգային զեկույցներին՝ Ստոկհոլմի կոնվենցիայի համաձայն
- Նախկին ծրագրերի/աշխատանքների դեպքերի ուսումնասիրություններ՝ ցույց տալու համար տվյալների հավաքագրումը համապատասխան ոլորտներում, իշխանություններում և շահագրգիռ կողմերի միջև: Ընդգրկված ոլորտներ՝ տեքստիլ, թուղթ, կաշվե, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ, հրդեհաշիջում, պլաստիկ և ռետինե արդյունաբերություն, կիսահաղորդչային արդյունաբերություն, մետաղապատման և ավիացիոն արդյունաբերություն,
- Ծրագրի՝ առանձին երկրներում նոր թվարկված քիմիական նյութերի վերաբերյալ ազգային տեղեկատվության համառոտ ակնարկ. իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ ֆտորացված ԿՕԱ-ների և արդյունաբերական ԿՕԱ-ների վերաբերյալ

➢ 06.12.2023թ. «Continental» հյուրանոց

- Արդյունաբերական այլ ԿՕԱ-ների կառավարման մարտահրավերները.
  SCCP, PCN, HCBD և նոր թվարկված ԿՕԱ-ներ, դեքլորան պլյուս, UV328: Առաջընթացներ նույնականացման գործում,
- Քիմիական նյութեր POP RC շղթայում. նոր գիտելիքների և տեղեկատվության անհրաժեշտություն,
- Նոր մեթոդական նյութեր PFAS-ի և արդյունաբերական քիմիական նյութերի համար (ենթակա են ոչնչացման),
- Արդյունաբերական քիմիական նյութերի վերաբերյալ երկրների ներկայացում, արդյունաբերական քիմիական նյութերի վերաբերյալ տվյալների պահանջների բացեր,
- Թվարկված արդյունաբերական ԿՕԱ-ներ՝ գործողության համար պոտենցիալ տարրեր, պլաններ – օրինակներ,
- NIP-ի ներկայացման նոր գործիքի ներածություն,
- Խմբային աշխատանք՝ օգտագործելով NIP-ի ներկայացման գործիքը, տարբեր մոդուլներ,

- Հետադարձ կապ՝ NIP-ի ներկայացման գործիքի օգտագործման վերաբերյալ-երկրների մակարդակները:

- **Արդյունքները**

Դասընթացը տեղեկատվության, գիտելիքի և պրակտիկ փորձի փոխանակում էր կողմ երկրների՝ ազգային համակարգողների, փորձագիտական խմբի անդամների, պետական համակարգի ներկայացուցիչների, միջազգային փորձագետների համար, որի ընթացքում մասնակիցները փոխանակվեցին առկա լավագույն փորձով, կարիքներով, գործիքներով, բացերով և առավելություններով:

- **Նշումներ**

Դասընթացը կրում է շարունակական բնույթ, ինչը ենթադրում է նոր տեղեկատվության ձեռքբերում, խնդիրների ու բացերի ներկայացում՝ «Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ակնարկի (պրոֆիլ)» մշակման, պարբերաբար վերանայման, նորացման և ներկայացման համար:

Իրավաբանական վարչության պետի տեղակալ Արմինե Հովհաննիսյան

Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Սառա Անտոնյան

Մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Քրիստինա Հակոբյան